## ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ԷԼ-ՔՈՒՎԵՅԹԻ ՆԱԽԱՆԳԱՊԵՏԻՆ

Նոյեմբերի 21-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Էլ-Քուվեյթի նախանգապետ Շեյխ Ալի ալ-Ջաբեր ալ-Սաբահի գլխավորած պատվիրակությունը՝ ուղեկցությամբ Քուվեյթի պետությունում ՀՀ արտակարգ եւ լիազոր դեսպան Փաղեյ Չարչօղլյանի:

Զրույցի ընթացքում Ամենայն Հայոց Կաթողիկոսն ուրախություն հայտնեց, որ երկու երկրների հարաբերությունները վերընթաց զարգացում են ապրում եւ վստահություն հայտնեց, որ ձեւավորված համագործակցությունը բարի արդյունքներ պիտի արձանագրի երկու ժողովուրդների կյանքում: Ապա այցելության առիթով Ամենայն Հայոց Հայրապետն իր երախտագիտությունն ու գնահատանքը հայտնեց Էլ-Քուվեյթի իշխանություններին՝ Քուվեյթում հաստատված հայ համայնքի հանդեպ ցուցաբերվող հոգատար վերաբերմունքի համար: Նորին Սրբությունը նկատեց նաեւ, որ հինգ տասնամյակ առաջ տարածաշրջանի առաջին հայկական եկեղեցու կառուցումը Քուվեյթում լավագույն վկայությունն է երկրի իշխանությունների կողմից հայ ժողովրդի նկատմամբ դրսեւորվող հարգանքի եւ գնահատանքի:

Էլ-Քուվեյթի նախանգապետն իր հերթին շնորհակալություն հայտնեց ջերմ ընդունելության համար եւ շնորհավորեց Ամենայն Հայոց Հայրապետին՝ Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի համանախագահ ընտրվելու կապակցությամբ: Շեյխ Ալի ալ-Ջաբեր ալ-Սաբահը կարեւորեց երկու ժողովուրդների բարեկամական հարաբերությունների ամրապնդումը փոխադարձ այցելությունների միջոցով:

Հանդիպմանն անդրադարձ կատարվեց միջկրոնական հարաբերություններին, ինչպես նաեւ համայն հայության հոգեւոր կենտրոն տարբեր իսլամ կրոնապետերի այցելություններին:

Վերջում Ամենայն Հայոց Կաթողիկոսը մաղթեց, որ Աստված օրհնի եւ արգասաբեր դարձնի հայ եւ արաբ ժողովուրդների բարեկամական հարաբերությունները, իսկ Էլ-Քուվեյթը շարունակի իր առաջընթաց կյանքն ապրել խաղաղության մեջ:

## ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ՀՀ-ՈՒՄ ԻՏԱԼԻԱՅԻ ԱՐՏԱԿԱՐԳ ԵՒ ԼԻԱԶՈՐ ԴԵՍՊԱՆԻՆ

Նոյեմբերի 21-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում ընդունեց Հայաստանի Հանրապետությունում Իտալիայի արտակարգ եւ լիազոր դեսպան Բրունո Սկապինիին: Դեսպանը, որ ավարտեց իր դիվանագիտական առաքելությունը ՀՀ-ում, այցելել էր Ս. Էջմիածին՝ ստանալու Վեհափառ Հայրապետի օրհնությունը:

Հանդիպման ժամանակ Նորին Սրբությունը առանձնահատուկ գոհունակությամբ անդրադարձավ դեսպանի՝ Հայաստանում պաշտոնավարության շրջանում ծավալած արդյունաշատ գործունեությանը եւ դեսպանատան ու Մայր Աթոռի միջեւ ձեւավորված ջերմ հարաբերություններին: Ապա Ամենայն Հայոց Հայրապետն իր գնահատանքը հայտնեց պրն. Սկապինիին հայ ժողովրդին մատուցած օգտաշատ ծառայությունների, ինչպես նաեւ Հայ Եկեղեցու նկատմամբ դրսեւորած հարգանքի համար:

Իր հերթին պարոն Բրունո Սկապինին իր երախտիքի խոսքը հայտնեց Ամենայն Հայոց Կաթողիկոսին՝ ընդգծելով այն ջերմ վերաբերմունքը, որ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը մշտապես դրսեւորել է իր նկատմամբ:

Զրույցի ընթացքում խոսվեց նաեւ հայ եւ իտալացի ժողովուրդների ընդհանրությունների, Հայաստանի եւ Իտալիայի բարեկամական փոխհարաբերությունների, ինչպես նաեւ Հայ Առաքելական եւ Կաթոլիկ Եկեղեցիների միջեկեղեցական արդյունավետ համագործակցության մասին:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ



Էլ-Քուվեյթի նախանգապետը Մայր Աթոռում



Իտալիայի դեսպանը Ս. Էջմիածնում